ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՌԱՋԻՆ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի տոնակատարության առթիվ նախատեսվող միջոցառումների շրջանակներում օգոստոսի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին էին եկել սփյուռքահայ առաջին ուխտավորների մեծ խմբերը: Նրանք սրբավայր-ուխտատեղիներ մեկնելու նվիրական փափագով Հայաստան էին ժամանել տարբեր երկրներից՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Կանադայից, Գերմանիայից, Ռումինիայից, Սիրիայից, Իրանից, Ուկրաինայից:

Ուխտավորներին Վեհարանի մեծ դահլիճում ընդունեց և իր հայրական օրհնանքի, քաջալերանքի ու գնահատանքի ջերմ խոսքն ասաց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հանդիպմանը ներկա էին Կանադայի թեմի առաջնորդ, «Ուխտագնացություն դեպի Հայաստան» հանձնաժողովի պատասխանատու Տ. Հովնան Արք. Տերտերյանը, Ուկրաինայի թեմի առաջնորդ, «Ուխտագնացություն դեպի Հայաստան» հանձնաժողովի անդամ Տ. Նաթան Եպս. Հովհաննիսյանը, Կիլիկյան Աթոռի Ամերիկայի Արևելյան թեմի և Կանադայի առաջնորդ, 1700-ամյակի կենտրոնական հանձնախմբի Գործադիր Մարմնի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ Արք. Աշճյանը, Կիլիկյան Աթոռի Ամերիկայի Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Մուշեղ Եպս. Մարտիրոսյանը, այլ հոգևոր հայրեր:

Վեհարանում կայացած ջերմ ընդունելությունից և Հայոց Հայրապետի հետ «ի հիշատակ» լուսանկարվելուց հետո, ուխտավորները շրջեցին նաև Մայր Աթոռի և Վեհարանի թանգարաններում, հիացումով դիտեցին այնտեղ պահպանվող թանկարժեք եկեղեցական գանձերը և արվեստի գլուխգործոցները:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ